

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ RA KOTAYK MARZ



<i>Մարզկենտրոնը` ք. Հրազդան</i>	<i>Marz centre Hrazdan town</i>
<i>Տարածաշրջանները` Հրազդան, Կոտայք, Նաիրի</i>	<i>Territoires Hrazdan, Kotayk, Nairi</i>
<i>Քաղաքները` Հրազդան, Աբովյան, Չարենցավան, Եղվարդ, Բյուրեղավան, Նոր Հաճն, Ծաղկաձոր</i>	<i>Towns Hrazdan, Abovyan, Charentsavan, Yeghvard, Byureghavan, Nor-Hachn, Tsaghkadzor</i>

Տարածքը Territory	2 086 քառ.կմ/ sq. km
ՀՀ տարածքում մարզի տեսակարար կշիռը Territory share of the marz in the territory of RA	7.0 %
Համայնքներ, 2016թ. տարեկգրի դրությամբ Communities, as of the beginning of 2016	67
Քաղաքներ Towns	7
Գյուղեր Villages	62
Բնակչության թվաքանակը 2016թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2016	253.9 հազ.մարդ/ ths. person
<i>այդ թվում` including:</i>	
քաղաքային urban	137.9 հազ.մարդ/ ths. person
գյուղական rural	116.0 հազ.մարդ/ ths. person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը Share of marz population size in RA population size	8.5 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը Share of urban population size	54.3 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	154 622.1 հա/ ha
այդ թվում` վարելահողեր including: arable land	37 750.4 հա/ ha

ՀՀ Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

ՀՀ Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկածորը, Արայի գետը, Գետաղը:

Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի» և «Արզնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Արայի լեռը (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա):

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2015թ.-ին մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 10.3 %,
- գյուղատնտեսություն՝ 6.1 %,
- շինարարություն՝ 5.0 %,
- մանրածախ առևտուր՝ 3.5 %,
- ծառայություններ՝ 6.8 %:

ՀՀ Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

RA Kotayk marz is situated in the centre of the Republic of Armenia. In the South-West it borders with capital Yerevan, in the West – RA Aragatsotn marz, in the North – RA Lori marz, in the North-East – RA Tavush marz, in the East – RA Gegharkunik marz and in the South – RA Ararat marz.

Hrasdan and Azat rivers run on Kotayk marz RA territory. Hrazdan River (Zangu) is one of left tributaries (the length is 141 km) of Araks River. There are 340 tributaries in the river system, 25 of which have length more than 10 km. The river tributaries are Marmarik, Tsaghkadzor, Aray River and Getar.

Asat river is also one of left tributaries of Araks (the length is 55 km). It originates from the Geghama mountain range (mainly lives on underground waters). The river waters are mainly used with the irrigation purpose.

Marz is also rich with mineral waters – in particular, “Bjni” and “Arzni”.

Geghama mountain laps, Tsaghkunyats mountain range, Hatis and Aray Mountains are situated in the marz territory. Hatis Mountain (Shamiram mountain) is a con-shaped volcanic mass (the height is 2 528m). Mountain is covered by meadow-steppe vegetation.

Aray Mountain is an extinct volcanic mass (the height is 2 577m) and situated in the east from Aragats Mountain between Kasakh and Hrazdan rivers.

The marz plains are Eghvard plain (the height above sea level is 1 200 – 1 300 m) and Hrazdan plateau (the height above sea level is 1 700 – 1 800 m).

Yerevan-Hrazdan-Sevan motor-road and Yerevan-Hrazdan-Ijevan railway that are of great importance for the country pass through the central part of the marz territory.

In 2015 the share of economy main branches of RA Kotayk marz in total volume of correspondent branches of the republic comprised

- industry 10.3 %,
- agriculture 6.1 %,
- construction 5.0 %,
- retail trade 3.5 %,
- services 6.8 %.

RA Kotayk marz comparatively developed and has multi-branch economy.

The main branch of economy is industry. Marz has an exclusive role, particularly, in the energy field. Here are two large organizations of electricity production.

Other main trend of marz industry is manufacturing industry, in which the following branches are more developed:

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, այլուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բեռնատրվոնրափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Աբովյան քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 44.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

Բյուրեղավան քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 9.3 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

Եղվարդ քաղաքը (2016թ. տարեսկզբին՝ 11.9 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

Նոր Հաճն քաղաքի (2016թ. տարեսկզբին՝ 9.4 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):

a) food and beverages production (meat and meat products processing and canning, fruits and vegetables processing and canning, milk products, flour, beverages production),

b) non-metal mineral other production (glass and glass products production, cement production),

c) metallurgy and metal products production (steel and iron casting),

d) furniture industry, production of finished articles not included in other categories (jewellery and adjacent products (diamond) production).

The main branch of marz agriculture is poultry farming. There are three large battery farms in the territory of the marz.

Freight and passenger transportations in the marz are implemented by road transport, railway and electric transports (cableway).

Abovyan town (44.4 ths. inhabitants as of the beginning of the 2016) is situated in 18 km distance from Yerevan. It is one of fast growing towns and big industrial centres of the republic.

The main trend of town industry is manufacturing, in which beer production takes prevailing place.

The main trend of industry of **Byureghavan town** (9.3 ths. inhabitants as of the beginning of the 2016, is situated in 24 km distance from Yerevan) is manufacturing, in which the production of non metal mineral and other produce (glass packing, porcelain and glazed earthenware industries) takes predominate place.

Eghvard town (11.9 ths. Inhabitants as of the beginning of the 2016) is situated at the south foot of Aray mountain, distance from Yerevan is 18 km.

The main trend of town industry is manufacturing, in which the production of food and beverages (distilled alcoholic beverages (cognac), milk products, flour production) and production of leather articles and shoes are particularly separated.

Agriculture plays a key role in the economic life of the town as well, in which grain farming is the main trend.

The main trend of industry of **Nor Hachn town** (9.4 ths. inhabitants in the end of 2015, is situated in 30 km distance from Yerevan) is manufacturing, in which the production of furniture and other articles not included in other groups (jewellery (diamond) production) takes prevailing place.

Հրազդան քաղաքի (2016թ. տարեկազմին՝ 41.2 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է ՀՀ-ում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

Չարենցավան քաղաքը (2016թ. տարեկազմին՝ 20.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

Օսղկաձոր քաղաքի (2016թ. տարեկազմին՝ 1.2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

The distance of **Hrazdan town** (41.2 ths. inhabitants as of the beginning of the 2016) from Yerevan is 50 km. It is situated on the left bank of upper flow of Hrazdan river. It is famous as an industrial centre. The Hrazdan heating and electric station is located here that is the most powerful in the republic. The other trend of town industry is manufacturing, in which the production of non metal mineral and other produce (in particular, cement production) takes prevailing place.


Charentsavan town (20.5 ths. inhabitants as of the beginning of the 2016) is situated in 36 km distance from Yerevan on the left bank of Hrazdan River. In 1953 after the accomplishing of hydro-electric station construction several large industrial enterprises have been established and Charentsavan became one of the most important industrial centres of the republic.

The main trend of town industry is manufacturing, in which metallurgy and finished metal products production (steel and iron casting) comprise its prevailing part.

The climate of **Tsaghkadzor town** (1.2 ths. Inhabitants as of the beginning of the 2016), is situated in 55 km distance from Yerevan) is soft and healthy. It is sanatorium town.

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՍԲԵՐԻ, 2016թ. հունվարի 1-ի դրությամբ
 DE JURE POPULATION BY AGE –SPECIFIC GROUPS, 2016 as of January 1

%



ՄԱՆՐԱՏԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ
 RETAIL TRADE UNITS

	Քանակը Number					
	2011	2012	2013	2014	2015	
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 587	1 545	1 347	1 193	1 148	Retail trade units, total
<i>այդ թվում՝</i>						<i>including</i>
խանութներ	792	841	804	854	909	Shops
կրպակներ	735	645	484	280	153	Kiosks
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3	2	2	2	2	markets of agricultural produce
սպառողական ապրանքների շուկաներ	5	5	5	4	5	markets of consumer goods
առևտրի այլ օբյեկտներ	52	52	52	53	79	other trade units

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
EDUCATIONAL INSTITUTIONS

	Քանակը Number					
	2011	2012	2013	2014	2015	
Պետական նախադպրոցական	48	52	54	54	53	State pre-school
Պետական հանրակրթական	104	104	104	104	104	State general educational
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1	Non-state general educational
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	24	24	24	25	24	Music and art school youth creative (cultural) centre
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	6	6	6	8	8	State preliminary vocational educational ¹
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6	State middle vocational educational
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	2	2	1	1	Non-state higher educational

ՔԱՂԱՔՆԵՐ
TOWNS/CITIES

Անվանումը	Town name	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ * Number of dejure population as of January 1, 2016, person *
Հրազդան	Hrazdan	41 170
Աբովյան	Abovyan	44 417
Չարենցավան	Charentsavan	20 490
Եղվարդ	Eghvard	11 880
Բյուրեղավան	Byureghavan	9 348
Նոր Հաճն	Nor Hachn	9 352
Ծաղկաձոր	Tsaghkadzor	1 214

ԳՑՈՒՂԵՐ
VILLAGES

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** Number of dejure population as of January 1, 2016, person **
Հրազդանի տարածաշրջան Hrazdan district			
1	Ալափարս	Alapars	2 359
2	Աղավնաձոր	Aghavnadzor	1 296
3	Արզական	Arzakan	2 848

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

Including those middle vocational educational institutions, which implement preliminary vocational program.

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** Number of dejure population as of January 1, 2016, person **
4	Արտավազ	Artavaz	602
5	Փյունիկ	Pyunik	421
6	Բջնի	Bjni	2 872
7	Լեռնանիստ	Lernanist	2 935
8	Կարենիս	Karenis	852
9	Հանքավան	Hanqavan	101
10	Մարմարիկ	Marmarik	769
11	Մեղրաձոր	Meghradzor	2 662
12	Գոռգոչ (Կորչլու)	Gorgoch (Korchlu)	-
13	Ջրառատ	Jrarat	551
14	Սոլակ	Solak	2 494
15	Քաղսի	Qaghsi	2 418
16	Ֆանտան	Fantan	1 042
Կոտայքի տարածաշրջան Kotayk district			
1	Ակունք	Akunk	2 208
2	Առինջ	Arinj	6 214
3	Արամուս	Aramus	3 746
4	Արզնի	Arzni	2 532
5	Բալահովիտ	Balahovit	3 539
6	Գառնի	Garni	7 734
7	Գեղադիր	Geghadir	719
8	Գեղաշեն	Geghashen	4 257
9	Գեղարդ	Geghard	375
10	Գետարգել	Getargel	803
11	Գողթ	Goght	2 044
12	Զար	Zar	1 513
13	Զովաշեն	Zovashen	167
14	Զովք	Zovk	1 027
15	Կաթնաղբյուր	Katnaghbyur	730
16	Կամարիս	Kamaris	2 433
17	Կապուտան	Kaputan	1 255
18	Կոտայք	Kotayk	2 026
19	Հատիս	Hatis	297
20	Հացավան	Hatsavan	590
21	Ձորաղբյուր	Dzoraghbyur	2 425
22	Մայակովսկի	Mayakovski	2 142
23	Նոր գյուղ	Nor gyugh	1 566
24	Նունուս	Nurnus	652
25	Ողջաբերդ	Voghjaberd	1 011
26	Պտղնի	Ptghni	1 621
27	Ջրաբեր	Jraber	425
28	Ջրվեժ	Jrvej	6 308
29	Սևաբերդ	Sevaberd	259
30	Վերին Պտղնի	Verin Ptghni	807
Նաիրիի տարածաշրջան Nairi district			
1	Արագյուղ	Aragyugh	1 160
2	Արգել	Argel	3 296
3	Բուժական	Bujakan	1 769

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ** Number of dejure population as of January 1, 2016, person **
4	Գետամեջ	Getamej	770
5	Զովունի	Zovuni	5 919
6	Զորավան	Zoravan	1 696
7	Թեղենիք	Teghenik	586
8	Մրգաշեն	Mrgashen	2 209
9	Նոր Արտամետ	Nor Artamet	1 249
10	Նոր Գեղի	Nor Geghi	6 303
11	Նոր Երզնկա	Nor Erznka	1 894
12	Պրոշյան	Proshyan	5 234
13	Սարալանջ	Saralanj	385
14	Քանաքեռավան	Qanaqeravan	3 772
15	Քասախ	Qasakh	6 095
16	Քարաշամբ	Qarashamb	725

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2015թ.
SOME SOCIAL INDICATORS OF DISTRICT COMMUNITY WITH 10 000
POPULATION IN RA KOTAYK MARZ, 2015**

	Ընդամենը Total	նրանցից՝ including:		
		կանայք ¹ women ¹	տղամարդիկ ¹ men ¹	
Բնակչությունը, մարդ	10 000	5 169	4 831	Population, person
Ծնվածներ, մարդ	142	66	76	Births, person
Մահացածներ, մարդ	92	44	48	Deaths, person
Ամուսնություններ	63	X	X	Marriages
Ամուսնալուծություններ	12	X	X	Divorces
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝				Education sphere, attendance to educational institutions, person
նախադպրոցական	251	121	130	pre-school
հանրակրթական	1 366	651	715	general schools
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	163	108	55	musical, art schools, creative centers for children
նախնական մասնագիտական (արհեստագործական)	26	7	19	preliminary vocational
միջին մասնագիտական	50	21	29	middle vocational
բարձրագույն մասնագիտական	9	5	4	higher vocational
Առողջապահության ոլորտ՝				Public health sphere
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	34 990	annual attendance to polyclinic during the year (number of attendances)
Մարզիկներ, մարդ	162	14	148	Athletes, person
Զբաղվածներ, մարդ	3 781	1 664	2 117	Employed, person
նրանցից՝ գիտական հիմնարկներում	0.0	0.0	0.0	of which - in Science establishments
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-	of which - doctors of Science
գիտության թեկնածուներ	0.0	0.0	0.0	candidates of Science
ուսուցիչներ	121	105	16	Teachers
բժիշկներ	21	Physicians
միջին բուժանձնակազմ	43	paramedical personnel
Գործազուրկներ, մարդ	1 129	567	562	Unemployed, person
Սոցիալական ապահովության ոլորտ				Social insurance sphere
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 397	823	574	total pensioners/ as of the end of the year/ person
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	366	X	X	families that get poverty family benefit and one-time benefit
Հաճախումների քանակը տարվա ընթացքում				Annual attendance during the year
գրադարան	16 349	Library
թատրոն	12	Theatre
համերգ	-	-	-	Concert
թանգարան	550	Museum
Իրավական ոլորտ				Law sphere
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	58	X	X	total crimes, during the year
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	29	X	X	of which – not grave crime
միջին ծանրության	16	X	X	medium crime
ծանր	12	X	X	grave crime
առանձնապես ծանր	0.0	X	X	special grave crime

¹ Ցուցանիշները հաշվարկային են:
The indicators are accountable.